XVI—XVIII ԴԴ. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Օտար նվաճողների թալանչիական արշավանքների և ծանր տիրապետության հետևանքով, ինչպես հայտնի է, հայ ժողովրդի ստվար զանգվածներ դեռ վաղ միջնադարից հարկադրված են եղել թողնել հայրենիքը և ապաստան գտնել օտար ափերում։ Այս եղանակով աշխարհի տարբեր երկրներում առաջ են եկել հայկական գաղութներ, որոնցից շատերը գոյատևել են դարեր շարունակ և ունեցել հասարակական-քաղաքական և մշակութային աշխույժ կյանք։ Հայկական գաղթավայրերը մշտապես կապ են պահպանել մայր երկրի հետ։ Պատմական որոշակի դարաշրջանում, հատկապես ուշ միջնադարում Հայաստանում ստեղծված մռայլ ժամանակաշրջանում, երբ Թուրքիայի և Պարսկաստանի դաժան տիրապետության հետևանքով բուն երկրում վերացված էր խաղաղ ստեղծագործական աշխատանքի ամեն մի հնարավորություն, հայկական մշակույթն ու հասարակական կյանքը գերազանցապես զարգանում են գաղթօջախներում։ Հետևաբար, գաղթավայրերի պատմությունը դա միաժամանակ նաև հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի պատմությունն է։

Հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասը կազմող հայկական գաղթավայրերի ուսումնասիրությունը գիտական պատշաճ մակարդակի վրա դնելու նպատակով Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում 1959 թ. ստեղծվել է հայ գաղթավայրերի պատմության բաժին, որը բավական ծավալուն աշխատանք է կատարել գաղթօջախների պատմությունն ուսումնասիրելու ուղղությամբ։ Հետաքրքրական աշխատություններ են հրատարակվել ռուսահայ գաղթօջախների (Ղրիմ, Նոր Նախիջևան, Գրիգորիոպոլ, Աստրախան, Հյուսիսային Կովկաս), ինչպես նաև Ուկրաինայի, Լեհաստանի, Եգիպտոսի, Նոր Ջուղայի, Հնդկաստանի հայ գաղթօջախների պատմության վերաբերյալ։ Շոշափելի աշխատանք է կատարվել Բուլղարիայի, Ռումինիայի, Տրանսիլվանիայի հայկական գաղութների ուսումնասիրման գործում։ Հետազոտվում են Ֆրանսիայի, Իրանի, Սիրիայի և այլ երկրների գաղթավայրերը։ Բաժինը կազմակերպում է նաև հայկական գաղթավայրերի պատմության առանձին պրոբլեմներին նվիրված գիտական նստաշրջաններ։

Վերջերս տեղի ունեցավ «XVI—XVIII դդ. ազատագրական շարժումները և հայկական գաղթավայրերը» հարցին նվիրված գիտական նստաշրջան, որը ներածական խոսքով բացեց ինստիտուտի դիրեկտոր Հ. Ա. Ավետիսյանը։

«Հայրենի երկրի և հայկական գաղթավայրերի կապերի հարցի շուրջը» զեկուցումով հանդես եկավ Վ. Բ. Բարխուդարյանը։ Նա հանգամանորեն անդրադարձավ այն իրողությանը, որ միայն մայր հայրենիքի հետ սերտ կապերի միջոցով է օտար միջավայրում պահպանվել հայ գաղթօջախների գոյությունը։ Նա մասնավորապես ընդգծեց ուշ միջնադարի հայ գաղթավայրերի նշանակալից դերը հայ ազատագրական շարժումներում, ինչպես նաև արևելաեվրոպական երկրների, Ռուսաստանի ու Հնդկաստանի հայազգի գործիչների բերած մասնակցությունն այդ գործին։ Իր բովանդակալից, հետաքրքրական զեկուցման մեջ Վ. Կ. Ոսկանյանը նշեց, որ հայկական ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշումը ձևավորվեց և զարգացավ տնտեսական ու քաղաքական փոխադարձ շահագրգռություններ օբյեկտիվ և ամուր հիմքի վրա։ Վ. Ա. Միքայելյանն անդրադարձավ սովետահայ պատմագրության մեջ անտեսված հարցի՝ հայկական արտագաղթերի խնդրին և, կանգ առնելով մասնավորապես VII—XVIII դդ. արտագաղթերի վրա, մատնանշեց դրանց հիմնական ուղիները և սոցիալ-քաղաքական ու տնտեսական պատճառները։ Վ. Ա. Բայբուրդյանի բովանդակալից զեկուցումը նվիրված էր Հայաստանի ազատագրության գործում ջուղայահայ խոջաների նշանակալից դերին։ Նա փաստերով հիմնավորեց այդ դրությունը, ինչպես նաև քննադատեց հայ ազատագրական շարժումներում ջուղայահայ առևտրականների դերը թերագնահատող, հայ պատմագրության մեջ երբեմն արտահայտվող կարծիքը։ Ս. Է. Քոլանջյանը և Գ. Պ. Պիճգիրյանն իրենց ուշագրավ զեկուցումներում անդրադարձան Մոլդավիայի,

Հունգարիայի, Տրանսիլվանիայի տարածքում գործող հայազգի այն նշանավոր դեմքերին (Պետրոս Վարդիկ, Ցոն Քաշ, Պետրոս Գրիգորովիչ, Պետրոս Ապետիկ, Գաբրիել Շաբինգարահիսարցի և ուրիշներ), որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել Արևելյան Եվրոպայի երկրներում հակաթուրքական դաշինքի ստեղծման գործին՝ Թուրքիայի պարտության և թուլացման մեջ տեսնելով նաև հայրենի երկրի ազատագրության երաշխիքը։ Վ. Ա. Խաչատրյանի և Լ. Ա. Պողոսյանի հետաքրքիր զեկուցումները նվիրված էին Աստրախանի և Հյուսիսային Կովկասի մի շարք հայկական գաղթավայրերի XVII—XVIII դդ. հայ ազատագրական շարժումներին ցուցաբերած ակտիվ վերաբերմունքին ու մասնակցությանը։ Վ. Մ. Մարտիրոսյանը հետաքրքիր զեկուցում կարդաց հայ և վրաց ժողովուրդների համագործակցության և Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն օտար նվաճողներից ազատագրելու հարցի վերաբերյալ։ Նա ուշագրավ փաստերով լուսաբանեց հատկապես 1873 թ. Գեորգիևյան դաշնագրի դերը երկրամասը Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու գործում։ Ա. Ա. Ուրուշյանն հանգամանորեն անդրադարձավ հայ գաղթավայրերի մասին XVIII դ. անվանի պատմագիր Միքայել Չամչյանի հայացքներին։ Նա ընդգծեց, թե նշանավոր պատմաբանը ժամանակին որքան բարձր է գնահատել գաղթավայրերի դերը հայ ժողովրդի համընդհանուր պատմության մեջ։

Զեկուցումների շուրջ ելույթ ունեցան ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը, պրոֆ. Վ. Ա. Պարսամյանը, ինստիտուտի գիտաշխատակիցներ Ժ. Հ. Անանյանը, Մ. Ղ. Դարբինյանը և ուրիշներ։ Բանավեճեր հարուցեցին և մտքերի աշխույժ փոխանակություն առաջացրին հատկապես «գաղութ», «գաղթօջախ», «գաղթավայր» հասկացությունների, հայկական արտագաղթերի կոնկրետ դրդապատճառների, XVIII դ. վերջին տասնամյակներում Ռուսաստանի գերիշխանության տակ հայկական պետականությունը վերականգնելու իրական հնարավորությունների հարցերը։

Գիտական նստաշրջանն ակնհայտորեն բացահայտեց, որ XVI—XVIII դդ. սուլթանական Թուրքիայի և խանական Պարսկաստանի ծանր լուծը թոթափելու հայ ժողովրդի ազատագրական շարժումները լայն արձագանք էին գտնում գաղութահայության շրջանում։ Հայկական գաղութներն իրենց համեստ հնարավորությունների սահմաններում շանացել և ամեն ինչ արել են մայր հայրենիքի ազատագրությանը նպաստելու համար։ Բավական է նշել, որ Հայաստանը ազատագրելու և Ռուսաստանի օգնությամբ հայկական պետականությունը վերականգնելու բոլոր նախագծերը մշակվել են բուն Հայաստանից դուրս, հայկական տարբեր գաղթավայրերում։ Նստաշրջանում իրավամբ ընդգծվեց այն իրողությունը, որ գաղթաշխարհի հայ զանգվածները մշտապես կապերի մեջ են եղել մայր հայրենիքի հետ և ոչ միայն չեն խորթացել նրանից, այլև աշխատել են նպաստել նրա ազատագրմանը, ապրել են հայրենի երկրի բախտով, նրա պատմական ճակատագրով։

ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱՋԻՐՅԱՆ